

W. B. W. S. W.

L E P T R

ՔԵՐԵՔՆԵՐ, ԱԶԳԵՑԻ, ԲԵԼՈՐԾԵՐ ԵՒ ՀԱՅԵՐԾԵՐ

Տարեկան գին կանիքի Ղրւոռուշ 100: Վեցամսեայ գին Ղրւոռուշ 52 ½: Եռամսեայ գին 26 ¾:
Հինգ ասորագրուոց գտնոցին մեկ օրինակ իրեն ձրի դիտի տրուի:
Այս Լրագիրը ամէն շաբաթ օրերը կը հրատարակուի :

Պօշիսն գու-րս գացած Լուսիկերուն Փօսթային ծախքը առնօցին չլրաց է :
Իր շամփն համար շուր-մը հրատարակեց ու-ցոցը դիմի շնարև տացին 40 փարաց :
Նորատիո գրոց ծանուցում մը ձրի է : Գու-րսեն եկած նամակիներուն Փօսթային ծախքը իրկոցը դիմի շնարև :

ВАДИМСКИЙ

‘**b b f f f t t l l o o f f b b**

ՊՈԼԻՍ 6 ՄԱՐՏ

Ո՞եծազօր տէրութեան կառավարութեանը
զինուորական բարեկարգութիւնը օրէ օր առաջ
երթալու վրայ ըլլալով՝ տէրութեան ընդարձակ երա-
կիրներուն մէջ տեղ տեղ ընդհանուր սպարապետ-
ներ գըրուած է . և մասնուորապէս սահմանագր-
լուխ երկիրները : Այսոնց մէկն է Իրաք արէպի կու-
սակալութիւնը , որուն մայրաքաղաքն է Պաղտասա .
և ամէնուն յայտնի է որ այս կողմերա որբան հար-
կաւոր է զինուորական բարեկարգութիւնը , մանա-
ւանդ տեղւոյն գրիցը նայելով : Այս կողմերու բը-
նակիշներն ալ այս բարեկարգութիւնն վայելել կը-
պահանջէին . որովհետեւ մինչեւ հիմայ այս կար-
գադրութիւնը եղած ըլլալով՝ մէկ մարդ մը զինուոր-
գրուեր նէ՝ անոր զինուորական ծառայութիւնը լր-
միննալու համար յատուկ ժամանակ որոշուած չէր .
կըրնար ըլլալ որ մէկ մարդ մը մինչեւ տասն տարի
և աւելի ալ նոյն ծառայութիւնը ընելու կը հար-
կադրուեր . բայց զինուորական կարգադրութեան
մէջ կանոն եղած է որ մէկ մարդ մը զինուոր գրուե-
լէն մինչեւ հինգ տարի պարտաւորի ծառայութիւն
ընելու . և անկեց ետքը ձգէ զինուորութիւնը և
իւր երկիրը երթայ : Այսպիսի կարգադրութիւն
ներով զինուորութեան ուժ տակ առաւելապէս՝
ինչպէս որ ըսինք՝ Պաղտասու երկիրներուն համար
հարկաւոր էր . որովհետեւ ընդարձակ սահմանագր-
լուխ մը ըլլալով՝ խաղաղութիւնը և հանդարսու-
թիւնը և շինութիւնը և մշակութիւնը և ուրիշ
օգտակար սահմանագրութիւնները հոն հաստատ-
ուիլ պէտաք են . և այն երկիրները շատ քիւր և աշխ-
ճէն գտնուելով , որ որբան որ տէրութեան կանո-
նաց հնազանդութիւն խոստանան նէ անհստատ
են , որովհետեւ անհանդարտ բարբի տէր են . անոնք
զուսալ պահելու համար կարգաւորեալ զօրաց բա-
նակ պէտք է . և ուր որ բանակ ըլլայ նէ՝ այն տեղ
զինուորական բարեկարգութիւն ալ ըլլալու է :

Ասկէց զատ՝ Արապիստանու Հիմազ գաւառը,
որուն մայրաքաղաքն է Խերքէ, որ մահմէտական
կրօնից հետեւողներուն մեծ ուխտատեղնն է, Իրաք
արէպի գաւառին սահմանէն միայն 140 ժամու ձա-
նապարհ հետաւորութիւն ունի. և շատ անդամ
ուխտաւորները Պալտասէն Խերքէ ցամսպով եր-
թալնուն համար այս երկու երեւելի գաւառներս
իրարու կապակցութիւն մը ունենալու յարմար են.
ուստի զինուորական խորհրդոյն ատենին մէջ որոշ-
ուեցաւ որ Հիմազու բանակն ու Իրաք արէպի
բանակը մէկ ըլլան. և Իրաք ու Հիմազ օռպուսու անու-
նով մէկ բանակ մը կազմեն. և առմէն պիտոյքնին և
զօրապետնին և զօրավարնին և ուրիշ զինուորական
հրամանատարնին կատարելապէս հոգացուի. և այս
բանակիս ալ ուրիշ բանակներուն նման մէկ հան-
ձարեղ և արի սպարապետ մը տրուի Ֆըլլրութեան
պաշտօնով. և ասով Հիմազու և Իրաքի սահմանա-
գլուխ գաւառները կանոնաւոր պաշտպանութեան
տակ մըսնեն : Եւ ասոր համար զինուորները եվել-
ցլնել պէտք էք : Եւ որովհետեւ այս բանակս ասանկ
կարգադրութեամբ՝ մէկ նոր բան մըն է, ուստի հարկ
էր որ ասոր սպարապետ ըլլալու մարդն ալ զինուո-
րական գիտութեան կատարելապէս հմուտ ըլլալէն
զատ, նոր կարգադրութեանց կանոններն ալ աղէկ
գիտնայ, նոր բանակի մը թէ զինուորներուն և թէ
մեծ և փոքր հրամանատարներուն պէտք եղածները
մանրամասնաբար աղէկ ձանչնայ :

Այս պաշտօնիս յարմարաւոր անձ մը գտնուեցաւ զինուորական դպրատանց տեսուչ (մէքեադիպիս ասքերիէ նազըըը) Ֆէրիչ Ապտի փաշայն . ուս-

տի տսոր նոր ՚ի նորաց Թ-ըլբո-թեան բարձր աստիճան
նը շնորհուելով Նորկարգադրուելու Հիմաղու Իրաք
բանակին սպարասպետ դրուիլը պատշաճ տեսնուե-
ցու : Օ ինուորական ատեանը ծանուցական գրով
մեծազօր Խնքնակալէն այս իրենց ընարութեանը հա-
ճութիւն և հաստատութիւն ուղղեցին . Խնքնական
ալ իւր հաճութեամբը հաստատեց . և արքունի
հրամանին համեմատ ՚ի գործ գրուեցաւ :

— Ասկէց քանի մը ամիս առաջ Արավիստանի Նէճէտ գաւառը՝ որ Հիմազու սահմանակից է, ապստամբութիւն մը ելաւ : Այս տեղ ելած ապրատամբութեան վեասը շուտով կը հստի Ոէքքէի վրայ . ինչպէս որ եղաւ վահապիներուն ապստամբութեան տաենը, որ այս Նէճէտ գաւառէս ելան, և Հիմազ գաւառը գտնուած երեւելի ու խաստեղիները կողոպտելով և հարուստ մարդոց ինչքը յափշտակելով շատ վեասներ հացուցին : Ծէ որ այս անգամ ալ ժամանակին իմացուելով առաջը չառնըլլէր նէ՝ կարելի էր որ աւելի վեասներ ըլլար : Բայց Ոէքքէի Ծէրիֆ գտնուող արժանապատիւ Ծէրիֆ Ուհամմէտ իսկի Ալի այն կողմերը գտնուած կըրթեալ զօրքերը և ուրիշ բազմաթիւ զինուորներ ալ գլուխու ժողվելով, և թնդանօդներ և ուրիշ զինուորական պաշտրք առնելով, ինքը անձամբ՝ Նէճէտ գնաց ապստամբներուն վրայ . և Նէճէտու գլխաւորը Ծէյլ Ֆիսալ ըստուած՝ որ այն ապստամբներուն մեծն էր, հրաւիրեց քովք բերել տուաւ . և խըրատներ և յորդորներ տուաւ որ այն արագները զըսպէ և անանկ կերպով մը կառավարէ՝ որ մինչեւ հիմայ ատեն ատեն ըրած անկարգութիւննին չընեն : Ծէյլ Ֆիսալն ալ բերնով խոստացաւ, և գրով ալ իր խոստամունքը հաստատեց, որ ասկէց ետքը մեկ մըն ալ առաջին ապստամբութիւնները և աւագակութիւնները չընեն . այլ հանդարտ կենան . և ամեն մէկը իրեն օրինաւոր կերպով վաստակ մը ընելու միաք հոգնեցընէ և ջանք ընէ : Այսնիւ Նէճէտու ապստամբութիւնը առանց արիւնհեղութեան վրանքարեցաւ, և մեծազօր թագաւորը՝ որ շատ խաղաղուէր է, և արիւնհեղութիւնը իր կամացը բոլոր վին հակառակ է, երբ Ոէքքէի շէրիֆին այս արիւն կան և խոհեմ ձամբան լսեց, շատ եվելօք հաճեցաւ . և ՚ի նշան շնորհակալութեան՝ յիշեալ մեծապատիւ վէրջին իրեն յէրիֆութեան աստիճաննին . յու

պատրւ ՀԵՂՓԻ լրսո ՀՐԻՓՈՒԵԼՅԱ առարձակուր յառաւուկ եղած նշանը փոխեց, վէլ իներուն յատկացած նշանեն վեր նշան շնորհեց. ամսականն ալ եվելցուց, և երկու աղջյքն ալ նմանապէս պատռեց: Վեծ աղան, որ է Ծէրիֆ Ապտուլլահ էֆէնտին, ժի՞ մրանի պատռուլ պատռեց. և պրզատիկ աղջուն, որ է Ծէրիֆ Ալ էֆէնտին, մր էլի-մրա անուանեց. և երկուքին ալ իրենց այս նոր պատռուցն համեմատ պատռուց նշանները խրկեց: Ծէրիֆ Ո՛Ռհամմէտ Խոկի Ալին ալ արդունի պալատին ախուապետութեան փառաւոր պաշտօնին տիտղոսը տուաւ. և առանձին հրովարտակաւ ծանուցանելով որ մինչեւ հիմա բըռնած արի և խոհական ընթացքներէն շատ շնորհակալէ, որ ժամանակին զգուշութիւն և աշալը ընթացիւն բանեցընելով մեծամեծ չարիքներու և արիւնհեղութիւններու առաջը առաւ, կը յորդուէր որ ասկէց ետքն ալ նշնապէս զգուշութեամբ և խոհեմութեամբ վարուելով իրեն հաւատարմութեան նշանները պակաս ընէ:

— Արապիադանի Շէմէն գաւառին կողմերը թէ պէտ ՚ի սկզբանէ հետէ (Սամանեան մեծաղօր տէ րութեան երկիրներուն մէկն է, բայց տեղոյն հեռաւորութեանը պատճառաւ այս տեղիս վրայ պէտք եղած տեղեկութիւնները առնելու շատ հոգ տարուած չէր, թէպէտ շատ ալ բնակիչ պարունակելով իր մէջը՝ մեծաղօր տէրութեան բազմամարդ գաւառներուն մէկը կրնայ սեպուիլ. և դիբքն ալ վաճառականութեան կողմանէ երեւելի է: Առատագութ ինքնակալը՝ որ իր հովանաւորութեանը ամեն երկիրներուն բնակչաց հանգըստութիւնը և երջանկութիւնը կ'ուրգէ, կամք

ը՞ստ իւր խնամքը այս հեռաւոր երկրիս վրայ ալ
տարածելու : Ուստի ուզեց որ՝ այն արդարակորով
կառավարութեան եղանակը՝ որիէց այս տեղայիք
մինչեւ հիմայ զուրկ մնացած են, և ուրիշ գա-
ւառներու մէջ որ տեղ որ հաստատուեր է նէ շը-
նորհակալութեամբ և գոհութեամբ ինքնակալին
կենացր համար միշտ աղօժող են, հոս ալ մտնէ :

իւսացը համար միշտ աղօթող են, հոս ալ մոնեկ :
Եէմէն գաւառին կառավարութիւնը բնիկ այն
տեղայի իշխանազուն շէյխ Հիւսէինին ձեռքը ըւ-
լալով՝ մեծազօր Խնդնակալ յատկապէս նոր կարգադ-
րութիւնները հոն ալ մոցընելու համար հրավար-
տակ մը տուաւ արքունի պալատան պաշտօնատար
արքանապատիւ Եշրէֆ պէկին, և այս բանիս հա-
մար հրաման ըրաւ որ Եէմէն երթայ, շէյխ Հիւ-
սէինին հետ անձամբ տեսնուի. մեծազօր Խնդնա-
կալին բարձրահրաման կամքը անոր յայտնէ. և ա-
նոր մոաց տրամադրութիւնը քննէ և հասկընայ
թէ արդեօք այս բարենպատակ գործոց ետեւէ ըւ-
լալու կատարեալ հաճութիւն ունի մի. և պէտք
եղած իրատները բերմալ խօսելով՝ հրովարտակն ալ
անոր տայ :

Եշտէֆ պէկիր Եհմէն երթալով շէյխ Հիւսէինին
դիտաւորութիւնը հասկլցաւ, որ զինքը մեծազօր
տէրութեան հնազանդ հպատակ ձանցնալով, և ար-
քունի հրովարտակին հրամանին կատարելումն ալ
իւր ձեռքը գտնուած երկիրներուն երջանկութեա-
նը պատճառ ըլլալը աղէկ հասկլնալով՝ կատարեալ
հաճութիւն տուաւ. և Եշտէֆ պէկին դրոյն հետ
ինքը շէյխ Հիւսէինն ալ առանձին նամակ մը գրեց
իւր կնքովը և ստորագրութեամբը հաստատապէս
խոստանալով որ ամէն ձեռքէն եկածը ՚ի գործ պիտի
դնէ մեծազօր և առատագութ ինքնակալին հը-
րամանը կատարելու համար: Այոր այս խոսուումը
մեծազօր ինքնակալը շատ սիրով և հաճութեամբ
ընդունեց:

Եւ որովհետեւ շէյխ Հիւսէինը երկար ժամանակէ ի վեր այն երկրորդ կը կառավագրէր, և այն տեղացիք ասիկայ մեծ ճանչցած և ասոր հնազանդելու սորված էին, և ինքն ալ մեծագօր տէրութեանը հրամանին կատարեալ հնազանդաթիւն կը խոստանար, ուստի հրմայ ալ բարձրագոյն հրամանաւ այն երկրին կառավարութիւնը այսպէս անունուի ուրիշ այսպէսներու կարգ մտնալով նորէն շէյխ Հիւսէինին յանձնուեցաւ. և շէյխ Հիւսէինն ալ ուրիշ այսպէսներու կուռտսկաններու հաւասարագարատիւ ըլլալու համար միջի միջանի աստիճանով ֆաշա անուանեցաւ. և այս բարձր պատուցս և իշխանութեանը յատուկ եղած պատուց նշանն ալ վերոյիշեալ Իշրէֆ պէկին խրկուեցաւ որ տակաւին ուրիշ բարեկարգութիւններու համար Հիմազու կողմերը կը գտնուի. որպէս զի շէյխ Հիւսէինին յայտնէ մեծագօր Խնքնակալին հաճութիւնը և ընորհակալութիւնը, և փաշայութեան պատիւ տալը. և անոր պատուանշանն ալ սմոր չնորհէ :

— Ուժագոր տէրութեան կառավարութեան վը-
րայ դանուող երեք կարգ պաշտօնատէր կինալինին
յայտնի է . որոնց առաջինն է բի-բակի սկզբին (զին-
ուորական կարգ), երկրորդը բի-բակի տակ մին (դի-
ւանական կարգ), և երրորդը բի-բակի ի-լամբին (օրե-
նքսպէտներու կարգ) : Առաջին և երկրորդ կարգի
մեծերը հանդէսի ասեն հագնելու . և զարդարուե-
լու , և անով իրենց ԲՆՀ կարգի և ԲՆՀ աստիճանի
պաշտօնատէր ըլլալին ցըցընելու համար յատուկ
միակերպ . հանդերձ (ունիֆումա) ունին . բայց
երրորդը՝ որ է օրենսդէտներու կամ ի-լամբէնը կար-
գը՝ մշջերնին աստիճանաց տարբերութիւնը հաս-
կըցընելու նշան ըլլալու յարմար բան մը չունեին .
միայն ՀՅՈՒ իւլիսամբ , առուելի տաղասակընն , անապօլո-
տաղասակընն , և իւնամբուլ եփէնադիսինն , թէ իրօք այս
պաշտօններս վարողները , և թէ լոկ այս պատիւ-
ներս առնողները , հանդիսի օրեր վրանին առած-
քէրածէ ըստած վէրաբէկուներնուն օձիքը ոսկեթե-
լով բանած կ'ըլլար . Տօյա բառած դատաւորները և

Հաստատեր են, և այս կառավարութիւնը 53
հոգիի ձեռք է որոնց գլխաւորներն են (Օտխելոն
Պառօ, լամարդէն, Տարակօն : Կը յուսանք որ
գալ շարթու Գաղղիայի կառավարութեանը այս
երեւելի փափոխութեանը վրայովերկար բարակ կը-
նամք գրելու :

ԱՆԳԱՄ : Խնկիլիզի Բառուամէնդին մէջ մըս
նողները որովհետեւ քրիստոնէական անկիչան կրօն-
քին վրայ երդում պիտի ընէին , ուստի անկիչան կը-
րէնքէն չեղաղները Բառուամէնդի անդամ չէին կըր-
նաբ ըլլալ : Այդման ոճը փոխելով՝ հռոմէականներ
և անկիչան չեղաղ բրոգէսդանդներ ալ առնուիլ ակլ-
սան ետքը այս առեւ անիս մէջ . բայց հրեայ առնուիլ
բնաւ չէր ըլլար : Այս ասրի Ուստ Ճօհն Ուուսէ-
լին աջակցութեամբը՝ հրեայներուն ալ Բառուամէն-
դի անդամ ընտրուելու արտօնութիւն արուեցաւ :
Այս բանիս համար երբ որ տէրութեան խորհրդա-
կան ասեանին մէջ Ուստ Ճօհն Ուուսէլը կը խօսէր,
Ոխագէօրթ գնդապետը հարցուց . արդեօք հրեայ
մը Բառուամէնդի անդամ ընտրուինէ՝ շաբաթ օրը
Բառուամէնդին ժողվուած տեղը գտնուելու չափ-
տաւորիթ մի . և թէ որ կը պարտաւորի նէ՝ շաբաթը
պահելու պարտաւորութեանը հետ որ ամէն հրեայ
վրայ է , այս ՚ի պաշտօնէ պարտաւորութիւնը Բնչ-
պէս կը միաբանի :

Ասոր այս ինդիբը էպիտրէկ ժամանակ է որ օրինաւոր կերպով լուծուած է՝ կ'ըսէ անդզիտական իջո՞ օրագիրը . մանաւանդ թէ՝ հարցմունքը ըլլուլէն առաջ պատասխանը գործով արուած էր : Հավիտ Աւալոմօն անունն հրեայն ասկէց մէկ երկու տարի առաջ վնասացի քաղաքապեաններուն մէկը (էլլորմէն) ըլլալու ընտրեցաւ . և իր այս նոր պաշտօն կը պարաւորէր զինքը ամէն օր պաշտօնին գործոյն պարապիլ . հետեւարար՝ շաբաթ օրերն ալ : Պ . Ավլօմօն անվակաս շաբաթ օրերն ալ կը գտնուէր . և երբ այս բանիս վրայօք իրեն հարցուեցաւ նէ՝ պահապիսն տուաւ . շաբաթ օր իմ այս գործոյն գլունուելը կրօնական պարտականութեանս բնաւ վնաս չունի . օրինաց դիտումն ալ ասանկ բաներու գլունուիլը արգիլէլ չէ . մէկ մարդ մը իրեն անձին մինակ վերաբերեալ գործ պիտի չքանի շաբաթ օրը . իմ այն օրը քաղաքապեաններութեան գործոյ գտնուիլը մինակ իմ անձին համար չէ , հասարակաց օգտին համար է : Ասոր տուած այս պատասխանին նայելով՝ Բառլամէնդի անդամ ընտրուող հրեայներն ալ կարող պիտի ըլլան առանց իրենց օրէնքին գէմ ընելու , շաբաթ օրերը Բառլամէնդի ժողովին մէջ գտնուիլու :

— Ակր թագամաս լլւսէքը քննութիւնը ամիրակը յուռնիլացի 10 ին մեռաւ իուլիսնայի Քառ քսովաքը, ծովացին զօրաց հիւանդանոցին մէջ, 70 տարուան։ Եյս մարդու էր որ Կոմբուլէօն Պօնաբարդէն Ելսկա կղզին աքսոր տարբաւ ընթառնութիւն նաւով։

ԳԵՐՄԱՆԻԱ: Հետոէ Հօմզուրքի կայսրն
տիր իշխանին ժառանգը՝ Պրետերիք իշխանորդին՝
յունվար 5 լուսնալու գիշերը մեռաւ, երկար և
ցաւագին հիւանդութիւն մը քաշելէն ետքը: Այս
իշխանազուն երիտասարդը ծնած էր 1830 ին ապ-
րիլ 6 ին. և հիւանդութենէ բռնուած ատենը
ուսմունք կը սորվէր Պօն քաղաքին համալսարանը:
Վեհապատիւ ծնողքը կրտսդաւ և անոր ընկերը
շատ օրէ ՚ի վեր իրենց հիւանդ զաւակին քովին էին.
և մեռած ատենը քովը գտնուեցան: Վսոր մեռնե-
լով՝ այս իշխանական ցեղին արական ժառանգու-
թիւնը հատաւ:

— Կայսերութեան կենցաղագէտ մարդիկ կը կարծեն որ, Խօմպարտիայի կառաւալարութեան մէջ ըլլալու նորոգութիւններուն կանոնները, որ շատ ատենէ ՚ի վեր ունենալու կը բաղձացին լում պարտացինները, և հիմակուան կառավարութեան կերպէն գ-ժգոհ ըլլովնին ալ ատեն ատեն գրով և գործով իմացուցեր էին, այս ներկայ տարւոյս մէջ պիտի հրատարակուին: Ոիլանու կուսակալ Ոթաւէր կոմուլ՝ որ զինքը միլանցւոց սիրելի ընելու ճամբան մինչեւ հիմայ գտած չէ, իրեն այս անյաջողակութեանը համար ետ պիտի կանչուի. և տեղը Ոնդէքուքքօլի կոմու պիտի խրկուի: Այս լուրս Ոի ինանցի մէջ տարածուեցաւ նէ՝ ասանկ պատուական անձէ մը մօտ ատեններս զրկուելու ըլլալը նուն վրայ ամէնուն ալ առ հասարակ սիրտերնին ցաւեցաւ: Կըսէն որ՝ Ուէնիէր մեծ գուքը՝ որ Խօմպարտիայի փոխարքայն է, աւելի մեծ իշխանութիւններ առաւ այս օրերս, որ ասկէց առաջ Հ

Հաստանու Կալիցիա գաւառը որ այս իշխանութեանս տակը անցած է, երկու մասն բաժնուի, արեւելքան և արեւմտեան Կալիցիա անունով. և ուրիշ միտքան խափառապատճեան թագավորութիւնը որ է.

ասոր համար այս քաղաքիս մէջն ալ մէկ մասնաւոր կուսակալ մը նոտի :

Կայսերական ցեղին ժառանգութիւն եղած երկիրները սովորութիւն էր որ՝ Երկրագործ բնակիչները ատեն ատեն առանց վարձուց (անկարիա) կայսեր Երկիրները կը մշակեին։ Այս սովորութիւնն վերհսալու վրայօք ալ խնդիր եղած է. և մօտերայս խնդրայս ալ օրինաւոր կերպով լուծումը կը արուի։

— Ուստաց տէրութեան կողմէն Ծրուսիսի
Պէռլին մայրաքաղաքը նառող գեսպանը Պ. Վէլէն-
տուֆ իմաց տուերէ ար՝ ուստաց զօրքէն 30,000
հոգի Լալիցիսիսի (լէհաստան) սահմանադլուխը
ժաղլուած են. և Վէսգրիսիսի կառավարութիւնը
ասնէք որ ժամանակ և ուր գործածել կ'ուզէ նէ՝
պատրաստ են :

Ա Ռ Ե Ս Ւ Ա : Գյուանքֆօսի լըագիրը յունիար 7
ին , նոյն ամսոյն Ֆին մէկ մասնաւոր տեղեկութեամբ
մը Ք Պ օնեայի լըագրին պատմած էն առնելով կը գը-
րէ որ , ռուսաց վեհափառ կայսրը մազդային հի-
ւանդութենէ բըւնուած է եղեր : Հիւանդու-
թիւնը թէպէտ բաւական ծանր է , բայց վախինալու-
պարագայ մը չերեւիր կ'ըսէ :

ՍՊԱՆԻԱ : Խակիլիվը յօնեին ժուծիքը օրագիրը
կը պատմէ որ՝ Վազնիայի թագուհին մէկ ծանր և
առսկալի հիւանդութեան մը քունուած է, որկէց
աղջատելը շատ դժուար կ'երեւի. սրովհետեւ ինչ
պէս որ կ'ըսէն կ'ըսէ՝ լուսնոտութեան տեսակէն է.
և յայտնի է որ այս հիւանդութիւնս խիստ քիչ կը
պատահի որ բժշկութիւն գտնէ : Վսկէց առաջ ալ
ասանկ հիւանդութիւն մը երեւցեր է վրան, բայց
թեթեւ եկեր և շուտով անցեր է. հիմակուանը
քիչ մը ծանրկէկ լըլալուն համար քովի մարդկիը և
պալատականները շատ տրտմութեան և մոմուաքի
մէջ են :

‘Կանիկ մէկ հիւանդութիւն մը Ապանիսյի թագուհուցն վրայ՝ և Եւրոպայի հիմակուան վիճակին մէջ, չէ թէ միայն թագուհուցն պալատականները, չէ թէ միայն սպանիստոց ազգեր, այլ բոլոր Եւրոպայի մէջ գտնուող կառավարութեան մարդիկը և կենցաղադէտ անձինքը խորին մոտմութի մէջ ձգելու բան է . թէ որ թագուհին կեանքը վտանգելու ըլլայ նէ՝ Ապանիսյի թագաւորական աժո՛տոցն ժառանգութեանը վրայ մեծ վէճ կը բացուի , որ որչափ որ առ այժմ Եւրոպայի ընդհանութ խաղաղութիւնը հաստատուն հիման վրայ դրուած կ'երեւի նէ՝ կարելի է որ այս խաղաղութեանս հիմք այն ատենը կը խախտի : Քռանսըզի տէրութեան Վատրիս գտնուող կուսակիցները այս բանիս վրան իրենց կազմը ուժովցընել , և Վօնքանսիէի դքսուհին՝ որ ինչպէս որ յայտնի է , Քռանսայի թագաւորին հարսն է , և Ապանիսյի թագուհուցն քըյրը ըլլալվ հիմակու հիմաց թագաւորութեան ժառանգն է , Վատրիս սերեւ տալ կը խորհին :

Քանի որ այս աղջիկը Փռանքութեան կը խորհրծաւ :
Քանի որ այս աղջիկը Փռանքութեան մագաւորին
տղուն կին եղաւ՝ ինկիլիզի տէրութեանն ու Փռ-
ռանքութեան մէջ մէկ պաղութիւն մը մտաւ . որովհե-
տեւ ինկիլիզը Փռանքութիւնն Ապանիսի մէջ զօրանա-
լը ամենեւին չուցեր : Այս մտածութեանս վրայ
հիմնելով ֆռանքութիւն օրադիրը կը կարծէ թէ՛ գու-
ցէ բանը ինկիլիզի օրադրոյն ըսածին չափ ծանր չէ .
և օրադիրը հասարակութեան ականջը բան ձգելու
մարտի բանը ծանրացուցեր է :

Հ Ա Ռ Մ : Կառավարութիւնը այս քահանսցաւ
պետիս օրը Հռոմայու երկիրը գտնուած հրեանե-
րուն քաղաքական աղատութիւն շնորհած ըլլալը
յայտնի է : Ֆիրենցի ուլու ըստուած օրագիրը կը
պատմէ որ՝ նոյն աղբէն կառավարութեան գործոց
մէջ ալ մարդ առնուիլ սկըսեր է . և կառավարու-
թեան խորհրդարանին (քօնսիլիօ տի տիրեցիօնէ)
անդամ ընարուեր է Պ. Սամուել Արագրի անուն
հրեայն : Հռոմայու երկիրը հրեայներուն քաղաքա-
կան պաշտօնի հասնելուն առաջինն է ասիկայ : Ա-
ւած ալ հրեայները աղատութիւն ունեին Հռոմ ,
բայց անիկայ աւելի թոյլատութիւն մը ըստուելու-
արժանի էր , քանի թէ աղատութիւն . նեղութիւն-
էին քաշեր . բայց անանկ պարտականութիւննե-
րու տակ ինկած էին , որ հրեայ չըլլային նէ անկէց
պատ պիտի մնային : Հիմայ անոնք վերնալէն քատ-
րուն հռոմայեցիի կարգ մտած են ասով :

ԶՈՒՏԻՑՑԵՐԻ : Խնկիլեզի դայնը օրագիրը, որ
օնտուա տպուած օրագիրներուն ամէնէն երեւե-
ին է, ատեն մը ռապիշտըներուն պաշտպանութիւն
կ'ընէր, հիմա բերանը փոխած կ'երեւի, և բանին
ապէկ մը տեղեկանալով՝ սկսեր է այս ալ ռապիշտընե-

չհասկցած անիբրաւները իրքեւ արդար ցըցքնելը
ներելի է . որովհետեւ ասանկ ընողին կամացը մէջ
ծըռութիւն մը ըլլալ չի ցըցքներ , արդարութեան
պաշտպան կը սեպուի , թէ և ներելի տգիտու-
թեամբ արդարութիւնն ուր ըլլալը չէ գտեր : Հայց
սույգ Ճանչնալէն ետքն ալ առաջկու պէս խօսիլը .
կամ բոլորովին լուրջ կարդացողներուն մաքին մէջ
առաջկուց . տուած գաղլափարը պահելու ջանալը
գտիլի քանի է չեմք կրնար լուել : Դայն օրագրին ը-
սածը ֆասեփօռ օրագրին համառ օտութենէն թարդ-
մանելով հաս գնեմք :

“ ՞ Չուիցցերիի մէջ յաղթող կողման բըռնած գործքերը նսյիմք նէ՝ մեծամեծ տէրութեանց յաճախակի իրենց վրայ զըբուցած չափաւորութեան օրինակը բնաւ չեմք տէսներ : Դաշնակից կառավարութեան մէջ հեղինակութիւննին բանող երեւելի մարդոց կրկին և կրկին բրած խոստմունքներնուուն և տուած ապահովութիւններնուուն հակառակ՝ որ Խնկիլզի կողմէն Պէսնա գացող գեսաբանին (սըր Ալբեդ Գըրստ Քանինին) տուեր էին , տակաւին Օրուիցցերիի կուտալարութիւնը եր զօրքովը սակաւաթիւ խուռալաբարներուուն կուտակցութիւն կ'ընէ հոռմէադաւան գաւառներուուն մէջ . և ասոնք ալ այն տեղերը անամկ բըռնուութիւններ և անիբաւութիւններ կ'ընեն՝ որ պատմելու անդամ մարդու սիրտ չքաշեր : Եւ յիրաւի ապահովութիւնն Պապապուրիի մէջ քաղաքը առնուելցն եաբը , և անփերպունք ըստած առանձին դաշնակցութիւնը քակիլցն ետքը ըրածնին՝ այս գաւառներուուն դէմ պատերազմնդ բանակը պատերազմի մէջ իբէն ըրածներնէն շոտ ծանր և չքաշուելու բաներ են : Պաշտօնաւելքներ ընտրելու կերպին մէջ ապօրինաւորութիւն կայ , յայտնապէս ընտրողները կը վախցընեն որ իրենց ուղած մարդիկը ընտրել տան : Ուսպիշաւ նոր կառավարութիւնը անհամօթ հեգնութեամբ

(զեկվրէնմիշըլլով) քիչ առենի մէջ մէկ սահմանաւոր կառավարութիւն մը հաստատեց . որ այս կառավարութեան անդամները օրինաւոր կառավարութեան տեղը պիտի բըռնեն մինչեւ ինն տարի : Հարբը՝ նյյեմբեր 29 ին , հրաման հանեց վճռով , որ առկեց առաջեղած կառավարութեանը պաշտպան ով կար այն առենը նէ գատաստանի քաշեն . թէ պէտ այն կառավարութիւնը օրինաւոր և բարեկարգեալըլլուն լսելիք մը չկար : Այսոնց այս ընթացքը խոռվարաներուն անսանկ երեւեցաւ , որպէս թէ բանը երկնցընելէ , ուստի այս քննութիւնը հազիւթէ սկըսած էր՝ գադարեցուցին . և խաղաղութեան և ընդհանուր թողութեան անունով՝ ըսկըռան առանց նախապատրաստութեան անմիջապէս գատաստան ընելու և տուած վճիռնին ժամանակ չանցուցած ՚ի գործ գնելու : Վիրկոյ ուրիշ բան չէր , բայց եթէ քաղաքացիներէն 31 հոգիի պքսոր , և ինչքերնին հասարակութեան գանձուն առնուիլ . ասոնք ոչ մատիկ ընտղ եղաւ , և ոչ ալ իրենք զերենք պաշտպանելու ժամանակ տրուեցաւ . վճուեցին որ 1,200,000 Օռուիցէրիի փռանք տուգանք տանք որ կ'ընէ 7,650,000 զուռուշ , կամ 15,300 քէսէ տակ . որով ամեն մէկուն բաժնին կ'ինայ 246,774 ¼ զուռուշ , և ասոր հատուցման երաշխաւորութիւնը առնելին զատ՝ քաղաքական իրաւունքներէ ալ զրկեցին մինչեւ վեց տարի . և աքարդներնուն ալ 15 տարի ժամանակ կտրեցին : Իսու տիեօրառուած վանքը գոյեցին , և բոլոր ինչքը և կալվածքը կառավարութեան գանձուն առին : Այս կիմակին եպիսկոպոսին և ինն վանքի վրայ՝ որ Շնովիթէներուն ալ չէր , 400,000 Օռուիցէրիի փռանք (2,550,000 զուռուսուշ) տուգանք ձգեցին : Եշկեղեցիին բոլոր ինչքը տէրութեան ձեռքը անցաւ . . . : Այս բռնական և անիրաւ վճիռներուն գործադրութիւնը այս գաւառներուս երեւելի տուները և բոլոր կրօնական բաները տակն ու վրայ կ'ընէ . կողոստելավ ամէն մէկը երենց հայրենի ժառանգութիւնէն կը զրկէ . և ասոր օրինակ կը գըսների միայն ֆուան սըզներուն 1793 ին խոռվարութեան ատենը հանվասիօն անուն հաստատուած ատեանը . և բոլոր աշխարհք ասով կը տեսնէ որ՝ ազատութիւնն ու արդարութիւնը Օռուիցէրիի երկրէն գուրս վլունտուած են : Այս ըստածներս միայն Ֆուայսուրի չէ , հռոմէադաւան ուրիշ գաւառներուն ալ լրին . սուրբք Բեռնարդոսի հիւրանոյին անգամ ըրին¹⁾ . քանզի ռադիքանակցութեան զօքքերէն օգնութիւն գըտնելով այս տեղս ալ կողապտեցին : Այս վանքը՝ որ բոլոր լշուապայի մէջ անուանի եղած էր մէջիկ կրօնաւորներուն բարեկառավարութեանը , արիւթեա-

Նը և հիւրասիրութեանը համար , և անանկ կարդի մը կրօնաւորներու ձեռք էր՝ որ բնաւ մէկ ատեն մը աշխարհային բանի խառնուած չունին . և 150 տարի ալէ որ անոնց ձեռքն էր . ասկէց ալ պատերազմի ծախք անունով 80,000 Օռուիցցէրիի ֆուանք տուգանք ուղեցին (340,000 զուռուշ) : Առոնց բողոքը բոլոր կրթեալ ազգաց ականջը կը հասնի : Եւ յիշաւի այս յափիշտակութիւնները որ կ'ընեն ռատիժները , ասոնց համբաւը բոլոր աշխարհքի մէջ ըստրկի մը ըրաւ ձգեց : Հարկաւորապէս ասոնքի իրենց բռնութեանը համար հռումէականներուն յաւիսեան ատելի պիտի ըլլան . և օտար տէրութիւններն ալ պիտի ստիպութին մէջ մտնելու . և ամէնն ալ պիտի հասկընան որ ռատիժներուն այս առ ժամանակեայ յաղթութիւնը աւելի մէծ և սոսկալի գէցութիւններու պատճառ պիտի տայ ::

ΕΩΦΕΒΗ

1 բագրոյս 86 թուովը պատմեցինք Պէջօղլուի
Նարեկեան ընկերութեան դպրատուն քննութեան ժամանակի զրուց-
ուած ճառը տակաւին ձեռքերնիս հասած ըլլալով
չի կրցանք տպել : Ասանկ ճառերը կը փափաքիմք հրատարակելու . մէկ մը որ՝ ամէն մէկը մէկ մէկ
տեսակ իրարմէ տարբեր ճարտասանական զրուց-
ուածքի օրինակներ են . ամէնքը գրեթէ մի և նոյն
նիւթոյ վրայ , բայց ամէն մէկուն ոճը և կարգա-
բանութիւնը և ձեռը զատ : Այս թերուն մի և նոյն
ըլլալը կը ցըցնէ որ՝ դպրատուններուն բարե-
կարգութեանը և ուսման յառաջադիմութեանը
փափաքող և աշխատող անձանց ամէնուն ալ նպա-
տակը նոյն է . ազգիս հիմակուան ուսանողները
թարգմանչաց երջանիկ գարուն ուսանողներուն նր-
ման ընել : Այս նպատակիս ոմանք շատ և սմանք
քիչ մօտեցած են : Պէջօղլուի դպրատան հայկաբա-
նութեան դասատու Ամբրէեան յարգի Պ . Խա-
չատուր վաժապետին եռանդնոտ ոգին և անխոնջ
աշխատութիւնը , նմանապէս թուաբանութեան և
աշխարհագրութեան դասատու Պ . Թուվմային ջա-
նասիրութիւնը սորմելու համար այս ճառիս կա-
րօտ չէինք . որովհետեւ ասոնց աշխատութեան
պտուղը Ամաթիայի համբաւաւոր դպրատան մէջ
ալ տեսնուեցաւ . որուն սուրբ Ասհակեան ընկե-
րութեան կառավարութեանը տակը մոտած ատենք
առաջին վարժապետ ըլլալը ասոնց վիճակեցաւ :
Բայց ասով առիթ մը կ'ունենամք անոնց ջանքը հը-
րատարակելու . և իրենց ալ խրախոս մը տալու .
որպէս զի գիտնան որ աշխատութիւննին ինչպէս որ
իրենք անպտուղ ձգել չեն ուղեր , մենք ալ անծա-
նօթ թողուլ չեմք ուղեր :

Վերոցիշեռք ճառին օրինակն է այս :

Ո՞վ վեճու, Ո՞վ ամբողջ Լայզը, պահնվելի հայրապետաց հոգին կ'ար-
ծարծե, անոնց հոգեբողը վարդապետութեանցը և աղջասեր
շահնից աշխերաներ ընծայելը, ուս անդրդութելի հաստափո-
թեանդ և աղջային պէտք պայծառութեանդ վայ՝ ողջամիտ
իրհրդաժշներ իւլարուանեն. ուս ի սիրանէ ասպուածա-
ռելու մարդուն մէրունդէն յասազ եկած եւ, այս, Արամ,
Լայզը, դիշալան ճերը ամիսուն արենակութեամբ յաջր-
տելը, անոնց հոգեոր կատարելը իւնելը անարադ և անա-
չու կը պահպանեն. Քո առջազըն աղջապուհիդ մէջ, նահա-
պէտական կառավալութեանդ և արքուական իշխանութեանդ,
առաջ, բարդին և խամահակին անողոյ հարուածներուն զն-
ընելուն և գրուեալի եղբուն մէջ լայզըն գլուխ, անոնց
պիուր յիշարակինը, հիմա ուրախութեան նուագիւրու և իւ-
իւն, պրայու ընկերունեներ, անախանելի Արշակունիքներ, լոր-
մանալի Այբուաներ, և մծագործ դիշալաներ արինցըն ը-
ռել պէտք:

մութեան պատիւը ունիւ : Այս նարեկեան վանուց աղօդլարա-
նէն, և արեկեան նորաբոշուշ վարժարանիւ վրայ օրհնութեան
շորհներ իւն օտքեն . առանանաւից վարժարանիւ մէջ այսպէտ ու-
սանց, քիչաբոնեական վարժարանութեն, սրբազն պատմո-
ւիւն, հայերեն, գաղլարեն, աշխարհագրութեն, լուս-
բանութեն, վայելսագրութեն . ասոնք՝ 'Կարեւա, պանծութե-
անաւածիւը համբաւեալ սրբազն ուժութիւն օրհնութեամբ է կա-
զին իւն պարաբերին . հոն իւն հսկեն հարս, հոս պիտութեան ոգին
հալածական իւթեաւ . հոն իւն սերմանեն օրհնութեան սերմու-
թը, հոս իւն պարաբերիւ ուման և քիչաբոնեական իւթեամբ
այգեսրանը : Եւ ՚ի վերայ այսր ամենայնի պիտի նոռնա՞նք ե-

բախտագետ սրբիւ շնորհապարա ըւլաւը մեր վկանդառ և աղա-
գասեր ամենապարի - Պատրիհոք սրբազնն հօրը մեր վկայ ա-
ռանցին իւրական ցըս-յած մարդասէր ինամաներուն, 'Վ իւր-
նայ ըւլ նորին բարձրութեան հոգը և սոսունաւեր ջանաւ,
'Վ պիտի չըսէ մարդարէին ըսածը, "Եթէ մոռայաց շեղի-
րուսաղէմ, մոռասցի զի՞ւ աշ ի՞մ" ևայըն. վասն զի ինչւ վիւ-
ժեանաւ աղքատիրութենէն բահարապատեաւ, նորոյ ընկերութեան
հիմունութեւ, և անոր պիտիրութիւնները առար արդէւամբ
և աղդու յրիրուրանօս իրախոսւելին երաւ, պաշատան անուամբ
բարձրահամեյս - պարունակւ, ինէ կայիւտան ընկերութենան
ինէ կայիւտան առաջնու այս երախափափիրու-
թեան նորութեւ դիմուն ընկերութեանմբ իւ մարդու յանեմ նորին
սոսունաւել գագատապատաց և ականածել իւնամանը, մաղլեւը
որ իր աղոյք հայեցուսծը չէ հետացընէ իր կայիւտան արդուցը
իւրութեանը վկայէն, և իւնամանը օրհնութեան ցոյն նորապահն
բայց իրու վկայ ցոյն, որ աճին և զօրաւան իւլինց մասուրական
իւլինց նորեաւուն մէջ.

Եր դուք ա աշխերտելը , որ այս պատկանելը ասենին
մէջ պատրաստութեր եւ յէր սահմանակը աշխարհնեւան դորչը
հապուցանելով բարեխնամ հանդիսականներուն վագահութեանը և
յուշ զբացընելը , և անհրաժեշտ պարագանելնենիդ հա-
պուցանել , երախտագիտեր մաօս սիրագունդը ընկերութեան ,
և բարեջան հոգաբարյուղայ , երեւ կը կարծի՞նք որ յէր հարցա-
շընութեան հանդեսը և համարյակ պատասխաններունը արձա-
գանգը հոս այս վշարադրին մէջ պիտի ծածկուի , հռն նայե-
ցի՛ հռն , ուր մէր սրբազն շարը իւ երիբարգիւլ քարարանեն
հոգանը յէլը կ'անիարկի՛ , հռն նայեցի՛ , ուր մէր սրբազն
պաշտպան և ընկերութեան հիմարելը յէր վայ կը ենթարարի .
հռն մէի մը ալ , ուր պէտ աղբասիրաց եւանդուն հոգին իւ
իւարայ ընկը յէր յաստաջարի մութեան ընթացք , և չնութեա-
նը բարեյաջու կտարարածը այն արենը պիտի հնալ ուրախու-
թեան նուագները , ցնծութեան յայները , և ծածկուած դա-
րեւ երեւան պիտի եւլան յէր նահարակի թեան գովկապները
ընկը , և պահազար գլուխիւն պենթելը . այն արենը պի-
տի երիւցընեն յէտաենին մէր սրբազն շարը և երանեաւ
նախնիք , աղբասիրաց լաւահունտ գրիւլը , և յէր անոնեն
պիտի տրամին սովեցօծ պատերուն այսիւան աղբասիրաց առո-
մարին մէջը . այն ժաման է ահա , որ հանդեսին մէջ յէր անոն-
աներին պատասխաննիդ աղբայան ուրախութեան առեգիս ,
և յէլք աւ հրաւեր պիտի կարտայ պատկանելը - առջայի՛ ու-
ընքն , զբացիք և մի՛ վկապիք աս փառաւոր ասպարելըն մէջ ,
որով մաբան պատկանի հայրեանակիրաց յոյը , և յէլին ալ
ինոնջ ավագանակիրութեանը , ի գառաս ամենասուրբ Արքութեա-
նը , և մոյ աստուածութեան , որուն եմս երիբագու (ի
բար սրբ) հոգանը և շշարպանիւամբ :

— Իզնիմիտ շատ ժամանակէ ՚ի վեր անանկ մէկ սովորութիւն մը կայ եղեր որ թէ տաճիկ թէ քլ-րիստոնեայք հարսնիք ընելու րլան նէ 20 դուռուշ կը հատուցանեն քաղաքապետին բայց հիմակուան քաղաքապետ Արժանապատիւ Օսման պէկը այս տուրքը միայն տաճկաց համար վերուցեր է այս օ-րերս։ Յարդապատիւ Խելքոնեան Գէորգ աղայն Օսման պէյին ասանկ զարմանալի առատաձեռնու-թեանը վատահանալով աղջչեր է անոր որ հայոց համար ալ այս տուրքը վերջացունելու չնորհ ընէ։ որպէս զի հարսնիք ընողները ասկէ ետեւ այս տուր-քը տեղւոյն դպրոցին տան որ օր աւուր առաւել դիւրութեամբ յառաջնայա։ Յիրաւի թէ արժա-նապատիւ Օսման պէյին այս կերպ բարեսիրո գլ-թութիւնը, թէ արժանայարդ Գէորգ աղային այս բանին համար ըրած ջանքը, երկութիւն ալ գովութեան ու չնորհակալութեան արքանի են ինչպէս որ իզ-նիմիտցիք ՚ի նշան չնորհակալութեան խնդրեցին որ այս լուրը հրատարակեմք։

ՕՐԵԱԴ ՑԱՆՈՒՅՆ

ՕՐԵԱԳԻՒՆ ամբ ԱՅՐԻՈՍ քահանային պողութ ծախու ե-
պողութ լեզուա հին է բայց ուրիշ աղջկութիւններովը բաւական
արժեք ունի : Ասի 190 խանգուն տեղը վայ զնուած է, ինչ
ծովը . և լեզ շամաչի կողմէն զբարձալ պեսարան ունի,
առապաշար հոր մը, հարիւր քահանան խանգուն պարտիւ
մը եւշը եսաեմի պապուական պողութերով, որոնցիւ պարուե առ-
իւ իւլ մը բան կը իրուի ծխաղամորճի համար : Այս պողութ է՛
առշեւ 90 խանգուն աւ պարապ գետին ունի որ իւրը ըւ-
լալը յարտ չենար չենա չենա : Այս որ իւ համի ծախու-
առեւ ասանի մէկ պողութ մը, իրայ երթաւ ՕՐԵԱԳԻՒՆ պիր-
ջը հետ իօսիւ :

ՀՐԱՏԱՐԱԿՈՒՅԹ ՀՐԱԳՐՈՒՑ

Յովել. Պէտք է կը կատարի. Չափահան-ը
Միշտիւ Ալաբեն:

¶ Պ Պլատին նոր իւան :

ԿԱՍԵԴՆՈՒԹՅՈՒՆ

Դ ՏՊԱՐԱՆԻ ՅՈՎՀԵԱՆՆՈՒ ՄԻՒՀԵՆՏՈՒԵԱՆ